անունները յիշած է. բայց ամենուն համար այլ պարապ տեղ թողած է թղթին վրայ, որ թերեւս յետոյ որ և է կերպով գտնէ և գրէ. սակայն չէ ըրած։ Աւոր հակառակ՝ շատ տեղ ի լուսանցս երեսաց գրքին (որ փոքրիկ դիրքով է, 400 երես, իւրաքանչիւր 15 տողով), յետոյ աւելցուցեր է նոր գիտելիքներ. քանի մի տեղ այլ գրուածն ուրուած է, թուի թէ օտար ձեռքով՝ ուր որ աղթարան բանի շշորդ կայ, և անանկ թանձր թանաքով ծեփած է, որ անկարելի է ծածկուածը բանալ։ Օտար լեզուօք կենդանեաց անունները չգիտնալն՝ դարմանք չէ, բայց ոչ նոյնպէս երբեմն հայերէնն այլ չգիտնալն, որոյ տեղ թուրքարէն դնէ. գուցէ առ ժամն չէ յիշած և յետոյ այլ մոռացեր է գրել հայերէն Ցատրակ անունը, և միայն գրէ « Ղումրի՝ թուրքի բառովն, այսպէս Սարեկի « տեղն այլ՝ Ղարայ տաւուք, թուրքի բա- « ռով ». մեր սովորաբար Սոխակ կոչածին այլ՝ կ'ըսէ, « Հայերէն Պըլպուլ.. թուրքարէն « Պուլպուլ », և այլն։ Բայց այս պակասութիւնները ներելի կ'ընեն՝ կենդանեաց բնագրութիւնքն, յորս (թողլով քանի մի սնոսի հմայական կարծիքները), կ'երեւի բաւական ճանաչողութիւն և հմտութիւն. տեղ տեղ այլ իր ժամանակին պատահածները, լսածն և տեսածը յիշելով՝ հաճոյական կ'ընէ գրածը։

Ուսումնական ոճ, բաժանմունք և կարգ չունի. այլ միայն (առանց յառաջաբանութեամբ իմացընելու) ցեղի վերածած է զկենդանիս, իւրաքանչիւրն՝ ծանօթագոյն կամ մեծագոյն տեսակներէն սկսելով ստորագրել. Ա. Զորքոտանիքն (ոմանց մորթոց կամ մուշտակաց վրայ միայն գրելով) կու համրէ 49 կամ 50 տեսակ. Բ. Թռչունք 44 տեսակ. Գ. Ջրային կենդանիք, 12 տեսակ. բայց խառն են զեռունք և միջատք այլ, որով յայտ է շատ պակասաւոր ըլլալն այս ցեղիս կամ բաժնիս. բայց առանձին Դ բաժին մ'այլ ըրած է 8 տեսակ « Ցրվային ժըժկնացն որ « կէճէպ ունիցին », այսինքն են խեցեմորթքն։ — Ե. Այլակերպք, սովորաբար Հրէշք կոչուածքն, եթէ մարդ և եթէ կենդանիք, բայց առասպելք են, 13 տեսակ։ — Զ. Ձկունք, որոց հետ և խեցեմորթք, 48 տեսակ. այս բաժնիս մէջ Աբրահամ յայտնուի ստոյգ կ. պոլսեցի, տեղեակ վոստրի և Մարմարայի ագի ջրոց ձկանց և լուղակաց համեղութեան և անոնց յոյն և թուրք անուանց։

Այս բաժիններէն զուրս՝ իբրեւ յետոյ գտած առանձին յիշէ համառօտ զկոտրպիլոս Նեղոս գետոյ՝ արաբացի Թրմնահ անուամբ, և Հնդկաց Ովկիանոսի կէտ ձուկն։ Դարձեալ, Է, քարոզգիրքերէ կամ Բարոյախօսներէ քաղած՝ հինգ վեց կտոր բան քանի մի թռչնոց և կենդանեաց բնութեան։

Այս բաժիններէն և վերոյիշեալ կաթին, մսի, և այլ, գրուածներէն զատ, ասոնց պէս ի բժշկարանաց քաղեալ գլուխ մի բան, կէս մի բնական՝ կէս բարոյական, « Մարգուս « (յ)օգուտածոցն օգտութեան և շահաւետու- « թեան, և այլ զէնն » (ՀԼՍԱՆ)։ Այս առանձին գրուածներն գրքին հաղիւ չորրորդ մասն կ'բլլան. միւս երեք և աւելի մասերն, իբրեւ 320 երես, կենդանաբանութիւնն են. իբրեւ 180 կենդանիք են յիշուածքն, որով յայտնի կ'իմացուի՝ թէ համառօտ են ստորագրութիւնքն, և կիսէն աւելին Զորքոտանեաց բաժնին է. ասոնց մէջ այլ Ագիւծին, Զիոյն, Շան, և քանի մի այլոց ստորագրութիւնքն երկար են. ամենէն երկայնն է Ագուիսսուն, վասն զի մեծ մասն Աղուիսագրքէն առած առակք կամ զրոյցք են։

Աբրահամ՝ (մեր վերը ընդօրինակած) յառաջաբանէն անմիջապէս եռեւ կու սկսի Զորքոտանեաց ստորագրութիւն Ագիւծէն, իբրեւ անոնց թագաւորէն. այսպէս. « Հայ բառով « Ագիւծ. Հոմ բառով.. Ցառանկ.. Ցառապ՝ « Էսեռ. Ցարսի՝ Շիր. Թուրք՝ Ագլան։ Եւ « սնանի գաղանս այս ջերմնային տեղիքն և « ջրարբու գետեղերներ, մնանաւանդ ի Պաղ- « տատն և Մուսուլն և Շադ (Ցիզրիս) գե- « տու եզերն՝ շատ կու լինին, եւս առաւել « ի ձէզայիրն, և որ տեղ որ տաք լինի և « ջրային տեղիք՝ անդ կու լինի, և ի Հրն- « դրստան այլ շատ կու լինի։ Գազանաց « թագաւոր կոչեն խմաստունքն։ Դեղին դու- « նով կու լինի որպէս զկատու. և է որ վիզն « սեւ մազ կու լինի. ահագնատեսիլ. այնոր « թուրք բառով յեզիտի ասեն. և է որ վիզն « առանց մազով կու լինի, այնոր Մկնա-